ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Խ-248-06.08.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ
(Խ-248-06.08.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ կառավարությունը ներկայացված օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացնում է հետևյալ դիտարկումները՝

1) Նախագծով առաջարկվում է օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանել, որ արարքը պատժվում է *«.... կալանքով երեքից վեց ամիս ժամկետով, ...»*, մինչդեռ նման պատժաչափ օբյեկտիվորեն չի կարող սահմանվել: Օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կալանքը կարող է նշանակվել տասնհինգ օրից մինչև երեք ամիս ժամկետով: Այսինքն՝ նախագծով առաջարկվող պատժաչափը չի կարող սահմանվել, քանի որ այն հակասում է կալանքը և դրա կիրառման պայմանները սահմանող՝ օրենսգրքի 57-րդ հոդվածին: Նման պայմաններում չի կարող նպատակահարմար համարվել օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պատժաչափի փոփոխությունը, քանի որ այդպիսով հնարավոր չի լինի ապահովել նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքը կատարելու համար պատասխանատվության համաչափ խստացումը:

1.1 Նախագծով առաջարկվում է նաև ազատազրկման ձևով պատիժ սահմանել օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասում, իսկ 2-րդ մասով նախատեսված ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը սահմանել հինգ տարի: Անհրաժեշտ է արձանագրել, որ օրենսգրքի հատուկ մասում նախատեսված արարքների համար պատժաչափերը պետության կողմից իրականացվող քրեական քաղաքականության դրսևորումներ են և նույնական՝ այլ արարքների, ինչպես նաև այլ հարաբերությունների նկատմամբ ոտնձգող արարքների համար սահմանված պատժաչափերն ընտրված են՝ ելնելով կոնկրետ իրականացվող պատժողական քաղաքականությունից:

Վերը նշվածի հիման վրա գնահատվում է կոնկրետ արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը, որից հետո դրա կատարման համար սահմանվում է համապատասխան պատիժ: Նախագծով առաջարկվող փոփոխությունը ոչ միայն կարող է անհամաչափ խիստ դիտվել քննարկվող արարքի համար պատասխանատվության ենթարկելիս, այլ նաև կխաթարի օրենսգրքի տվյալ գլխի պատժողական համակարգը: Բացի այդ, ներկայացված հիմնավորումներով ամբողջությամբ չեն ընդգծվում, թե ինչով է անհրաժեշտ նման անհամաչափ խստացումը: Ի վերջո, պատժի խստացումն ինքնին չի ենթադրում հետագայում նման հանցագործության կատարման բացառում, և արարքի համար պատասխանատվությունը խստացնելիս անհրաժեշտ է հստակ հիմնավորել դրա անհրաժեշտությունը, ինչը նախագծի հիմնավորմամբ չի կատարվել:

Այսպիսով՝ նախագծի 1-ին և 3-րդ հոդվածներով առաջարկվող փոփոխությունների ընդունումը նպատակահարմար չէ՝ նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ ներկայացված հիմնավորումները ամբողջական չեն անդրադառնում նման խստացումներին: Հիմնավորման մեջ նշված հանգամանքները առավելապես ենթակա են գնահատման ոչ թե օրենսդրական փոփոխություններ կատարելիս, այլ կոնկրետ փաստի առթիվ իրականացվող վարույթի շրջանակներում: Հետևաբար, առաջարկում ենք նաև լրամշակել ներկայացված հիմնավորումները:

2) Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվում է օրենսգրքի 265-րդ հոդվածի երկրորդ մասում որպես արարքի կատարման ծանրացնող հանգամանք նախատեսել հանցագործությունը կրկին անգամ կատարելը: Նման կարգավորումն ամբողջությամբ համընկնում է ժամանակին քրեաիրավական օրենսդրության մաս կազմող կրկնակիության ինստիտուտի հետ: «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի թիվ ՀՕ-143-Ն օրենքով ուժը կորցրած ճանաչելով կրկնակիության ինստիտուտի բոլոր դրույթները ՀՀ քրեական օրենսգրքում՝ օրենսդիրը հրաժարվել է այս ինստիտուտից:

Կրկնակիության ինստիտուտի մերժման հիմքում դրված հիմնական գաղափարը քրեական իրավունքում անկյունաքարային նշանակություն ունեցող արդարության և պատաս-խանատվության անհատականացման սկզբունքի արգելքներն են՝ սահմանված օրենսգրքի 10-րդ հոդվածով, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածով սահմանված կրկին դատվելու արգելքը:

Անձի կողմից նախկինում հանցանք կատարած լինելը կարող է հաշվի առնվել դատարանի կողմից որպես անձին բնութագրող հատկանիշ կամ օրենսգրքի ընդհանուր մասի այլ նորմերով սահմանված դեպքերում, օրինակ՝ արարքում ռեցիդիվի առկայությունը գնահատելիս: Միևնույն ժամանակ, անձի կողմից նախկինում հանցանք կատարելը չի կարող կրկին գնահատվել նրա կողմից կատարված նոր հանցագործության որակման ժամանակ:

Հետևաբար, նման ծանրացնող հանգամանքի սահմանումը չի կարող նպատակահարմար համարվել, քանի որ այն ուղղակի հակասության մեջ է գտնվում ինչպես քրեական օրենսդրության սկզբունքների, այնպես էլ ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի հետ:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ ներկայացված նախագծի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

11 սեպտեմբերի 2019 թվականի N 1287 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Աննա Վարդապետյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Խ-248-06.08.2019-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 11
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Խ-248-06.08.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 265-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

«պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով։»

Հոդված 2. Օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասում լրացնել նոր՝ 4-րդ կետ՝

«4) կրկին անգամ»

Հոդված 3. Օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

«պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի ութհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ կալանքով՝ երեքից վեց ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով։»

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Առաջարկվող նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է հետեւյալ հանգամանքներով.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 265-րդ հոդվածի 1-ն մասի՝

1. Դիակն անարգանքի ենթարկելը կամ թաղման վայրերը, մահացածներին թաղելու կամ նրանց հիշատակի հետ կապված ծիսակատարությունների համար նախատեսված գերեզմանների վրա եղած շինությունները կամ առարկաները ոչնչացնելը, վնասելը կամ պղծելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

Օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

2. Նույն արարքները, որոնք կատարվել են՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից,

2) ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ թշնամանքի շարժառիթով,

3) գերեզմաններում գտնվող կամ դրանց վրա եղած առարկաները հափշտակելով՝

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Առաջարկում ենք կատարել փոփոխություններ եւ լրացումներ՝ լրացնելով Օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասում՝ որպես պատժատեսակ լրացնել ազատազրկումը, իսկ 2-րդ մասում ներառել միեւնույն արարքը կրկին անգամ կատարելու համար նախատեսվող ծանրացուցիչ հանգամանքը? 2019 թվականի օգոստոսի 1-ի իրադարձությունները ցույց տվեցին, որ Օրենքի վերոնշյալ հոդվածում ամրագրված արարքը կրկին անգամ կատարելու համար նախատեսված չէ համապատասխան պատիժ եւ նշված փոփոխությունը նպատակ է հետապնդում Օրենքի բացը լրացնելու:

Պատժաչափը եւ պատժի տեսակը խստացնելու անհրաժեշտությունը բխում է այն փաստից, որ հոդվածում նշվող գերեզմաններ եզրույթը, որը բացառապես նշանակում է մեկից ավելի գերեզման, վերաբերում է ողջ գերեզմանատանը, ինչպես տեղի ունեցավ 2019թ. օգոստոսի 1-ի իրադարձությունների դեպքում: Վերոնշյալ դեպքում ոչ միայն նյութական,այլեւ բարոյական վնասներն անհամատեղելի են եւ ոչ համարժեք:

Օրենքի փոփոխության համար հիմք է հանդիսացել նաեւ միջազգային փորձի ուսումնասիրությունը, մասնավորապես՝ Վրաստանի, Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի, Մոլդովայի, ԱՄՆ-ի օրենսդրության համապատասխան դրույթների ուսումնասիրությունը եւ դրանց մեկնաբանությունները, որտեղ կալանքի նվազագույն ժամկետ սահմանվում է 3 ամիսը, իսկ

ազատազրկումը՝ որպես պատիժ ավելի խիստ է (Ուկրաինա, Մոլդովա) քան Հայաստանի Հանրապետությունում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Եռաբլուրը՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հուշահամալիր-պանթեոն, ազգային գերեզմանատունն է, որտեղ ամփոփվել են Արցախյան ազատամարտում եւ 1994 թվականի զինադադարից հետո զոհված ազատամարտիկների եւ զինծառայողների աճյունները, վերջինս հայ ժողովրդի նորագույն պատմության ընթացքում ձեռք բերված հաղթանակների հուշահամալիր-կոթողն է, ինչպես նաեւ այդ հաղթանակների ձեռք բերման համար իրենց կյանքը զոհած հերոսների հիշատակը հավերժացնող ուխտատեղին՝ այս ամենը ոտնահարող գործողությունները, առավել եւս կրկին անգամ կատարված, պարտադիր կերպով եւ պայմանավորված հասարակության պահանջով պետք է ամրագրվեն ՀՀ քրեական օրենսգրքում համապատասխան պատժատեսակներով եւ պատժի չափով: